

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Փետրվարի 1-ին, կիրակի.- Գ կիրակի զկնի Ծննդեաց:

Այսօր Մայր Տաճարի Ավագ Ս. Սեղանին իր անդրանիկ Ս. Պատարագը մատուցեց Տ. Խորեն աբեղա Հովհաննիսյանը: Պատարագիչ Հայր սուրբը «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ջի ալնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին իւր Միածին ետ» (Հովհ. Գ 16) բնաբանով:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

Փետրվարի 3-ին, երեքշաբթի.- Բ օր Առաջաւորաց պահոց:

Այսօր Վեհափառ Հայրապետը Եգիպտոս և Գերմանիա կատարած հովվապետական անդրանիկ այցելությունից վերադարձավ Մայր Աթոռ:

Փետրվարի 5-ին, հինգշաբթի.- Դ օր Առաջաւորաց պահոց:

Այսօր Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեց Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպան Համիդ Ռեզա Նիքքար Իսֆահանին: Դեսպանը Նորին Սուրբ Օծությունն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանձնեց Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Սեյեդ Մոհամադ Խաթամիի նամակը, որտեղ մասնավորապես ասվում է.

«Անկասկած, Աստվածային կրոնների առաջնորդների միաբանությունը, ելնելով նրանց եղակետային ընդհանուր սկզբունքներից՝ մարդու վերադարձը դեպի բարոյական արժեքներն ու պատմական ինքնության վերագտնումը, ամրապնդում է քրիստոնյա ևիսլամ ժողովուրդների՝ դեպի զարգացում ընթացող գործընթացը: Ուստի մտավորականների ու հավատի ընկերակցների մշտական

շփումն ու ավելի լայն համագործակցությունը ներկայիս համատեղ նպատակների իրականացման գործում ավելի քան անհրաժեշտ ու նպաստավոր է: Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունն ամենայն լրջությամբ իր ջանքերն է գործադրում այս ընագավառում:

Ողորմած Աստծուց Ձեզ համար խնդրում եմ երկարատև առողջություն և հաջողություններ, իսկ ազնիվ հայ ժողովրդին՝ բարօրություն և երջանկություն»:

Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց հարեւան երկրի նախագահի բարեմաղթությունների համար, որ արտահայտել է հոգեւոր եւ բարոյական մնայուն արժեքների վերականգնման նպատակով կրոնական պետերի միջեւ երկխոսության եւ գործակցության առնչությամբ: «Մենք միշտ պատրաստ ենք եղել երկխոսությանն ու համագործակցությանը, որովհետեւ դա է միակ ճանապարհը, որպեսզի հաղթանակեն խաղաղությունն ու արդարությունը, որոնք Աստծո կամքի արտահայտություններ են», – ասաց Վեհափառ Հայրապետը:

Ջրույցի ընթացքում խոսվեց նաեւ երկու ժողովուրդների համագործակցության անհրաժեշտության մասին:

Փետրվարի 7-ին, շաբաթ.- Սրբոցն Սարգսի զօրավարին եւ որդւոյ նորա Մարտիրոսին եւ չորեքտասան զինուորացն:

Այսօր Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի՝ Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսին իր աջդրանիկ այցը տվեց Հայաստանի Ազգային Ժողովի նորընտիր նախագահ Խոսրով Հարությունյանը:

Վեհափառ Հայրապետին պրն. Հարությունյանը հավաստեց, որ հայաստանյան վերջին իրադարձություններից հետո Խորհրդարանում աշխատանքը շարունակվում է իր բնականոն ընթացքով: Իսկ վերջին շրջանում Հայաստանում սահմանադրական ճանապարհով տեղի ունեցած իշխանական մարմինների փոփոխությունները պրն. Հարությունյանը դիտեց իբրեւ քաղաքական հասունության վկայական: Պրն. Հարությունյանը կարեւորեց Ազգային Ժողովում ստեղծված քաղաքական հանդուրժողականության մթնոլորտը, ինչը կնպաստի նախագահական ազատ եւ անկախ ընտրությունների կազմակերպմանը:

Ավելի քան մեկժամյա զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը նորընտիր նախագահին հանգամանորեն պատմեց վերջերս Եգիպտոս եւ Գերմանիա կատարած իր հովվապետական այցելությունների, այդ երկրների քաղաքական իշխանությունների հետ ունեցած հանդիպումների, հայ-գերմանական կապերի զարգացման հեռանկարների մասին:

Հայոց Հայրապետը իր բարեմաղթանքը հայտնեց նորընտիր նախագահին՝ արտահայտելով այն հույսն ու համոզումը, որ Ազգային Ժողովն իր բարենպաստ դերը կկատարի, «որպեսզի Հայաստանը մնա անխոով, իսկ հետագա իրադարձություններն ընթանան քաղաքացիական բարձր գիտակցությամբ»:

«Մայր Աթոռ Սբ. Էջմիածինը կմնա մեր պետականության կողքին», – ասաց Վեհափառ Հայրապետը:

Այսօր Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեց նաեւ «Ազատություն. Ազատ Եվրոպա» ռադիոկայանի պատվիրակությունը՝ ռադիոկայանի նախագահ Թոմաս Դայնի գլխավորությամբ:

Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ հանդիպման ընթացքում պրն. Դայնը և ռադիոկայանի հայկական բաժնի տնօրեն

Մատտո Սողոմյանը ներկայացրին ոադիոկայանի գործունեության հիմնական ուղղությունները: Ըստ Մարտո Սողոմյանի, «Ազատության» հայկական բաժինն ունի նաև հոգևոր հաղորդաշար՝ յուրաքանչյուր կիրակի, 10 րոպե տևողությամբ:

Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց ոադիոկայանի գործունեությունը թե՛ տեղեկատվական և թե՛ հասարակության մեջ քաղաքական կուլտուրայի ձևավորման ու զարգացման առումով:

Փետրվարի 8-ին, կիրակի.- Դ կիրակի զկնի Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարի Ավագ Ս. Սեղանին Ս. Պատարագ մատուցեց Տ. Արտակ աբեղա Տիգրանյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը՝ «Ես եմ հացն կենաց» (Հովհ. Զ 35) (Տե՛ս էջ 133):

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

Փետրվարի 11-ին, չորեքշաբթի.- Պահք:

Այսօր Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեց Հայաստանի Հանրապետության վարչապետ Ռոբերտ Քոչարյանը:

Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսն իր բարեմաղթանքը հայտնելով վարչապետին, բարձր գնահատեց վերջին իրադարձությունների ընթացքում պետական պատասխանատու անձանց դերը օրինականության եւ սահմանադրական նորմերի պահպանման գործում: Նորին Սրբությունը հայտնեց այն հույսն ու համոզմունքը, որ գալիք նախագահական ընտրությունները նույնպես կանցնեն օրինականության սահմաններում՝ քաղաքակիրթ ազգին վայել: Իսկ Եկեղեցին, ինչպես նշեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը, միշտ կմնա հայոց պետականությանը զորավիգ:

Պրն. Քոչարյանը հավաստիացնելով, որ գալիք ընտրությունները կլինեն ազատ ու արդար, այդ հարցում կարեւորեց Եկեղեցու մեծ դերը:

Վարչապետը տեղեկացրեց նաեւ, որ ամեն ինչ արվում է հանրապետության տնտեսական եւ քաղաքական կայունությունը պահպանելու ուղղությամբ: Վերջինիս ապացույցն է այս շրջանում նոր պայմանագրերի կնքումը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ:

Վեհափառ Հայրապետը նշեց, որ գալիք իրադարձությունները հարկ է, որ ընթանան այնպիսի պայմաններում, որ չտուժեն ժողովուրդն ու հայրենիքը, պետությունն ու Եկեղեցին, իսկ Հայաստանի Հանրապետությունը շարունակի իր բնականոն զարգացումը:

Փետրվարի 12-ին, հինգշաբթի.- Սրբոց Ոսկեանց քահանայիցն:

Այսօր Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում ընդունեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետ Լեռնարդ Պետրոսյանին:

Զրույցի թեման փետրվարի 19-20-ին արցախահայության ազգային-ազատագրական զարթոնքի 10-րդ տարեդարձին նվիրված Ղարաբաղում կազանձիք տոնակատարությունն էր, որին իր ներկայությունն էր բերելու նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Նորին Սրբությունը նշեց, որ արցախյան շարժման տասնամյա տարեդարձը

կտոնվի նաեւ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում: Այդ առթիվ փետրվարի 22–ին Սբ. Պատարագ կմատուցվի Էջմիածնի Մայր Տաճարում, որի ընթացքում կքարոզի Վեհափառ Հայրապետը:

Փետրվարի 13–ին, ուրբաթ.– Պահք:

Այսօր Մայր Տաճարում, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվեց Տեառնընդառաջի նախատոնակ: Նախատոնակի ավարտից հետո Գևորգյան Ճեմարանի մարզադաշտում վառվեց ավանդական խարույկը, որի շուրջը հավաքված միաբանները, ուսանողները և հավատացյալները երգեցին հոգևոր և ազգային երգեր:

Փետրվարի 14–ին, շաբաթ.– Տեառնընդառաջ: Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի Տաճարն:

Այսօր Մայր Տաճարի Ավագ Ս. Սեղանին Ս. Պատարագ մատուցեց Գևորգյան Ճեմարանի տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը: «Հայր մեր»–ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր սուրբը՝ «Արդ արձակեա զծառայս քո, Տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն. Զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց» (Ղուկ. Բ 29–30) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Փետրվարի 15–ին, կիրակի.– Ե կիրակի զկնի Մեծի Պահոց:

Այսօր Մայր Տաճարի Ավագ Ս. Սեղանին իր անդրանիկ Ս. Պատարագը մատուցեց Տ. Արշեն արեղա Սանուկյանը: Պատարագիչ Հայր սուրբը «Հայր մեր»–ից առաջ քարոզ խոսեց՝ «Ամենայն որ ըմպէ ի ջրոյ յայդմանէ՝ միւսանգամ ծարաւէ, քանզ որ ըմպէ ի ջրոյն, զոր ես տացց նմա, մի՛ ծարաւեսցէ յաւիտեան» (Հովհ. Դ 13) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

Փետրվարի 17–ին, երեքշաբթի.– Սրբոց Զեւոնդեանց քահանայիցն:

Այսօր Վեհափառ Հայրապետը մեկնեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցի՝ մասնակցելու այստեղ մատուցվող Ս. Պատարագին:

Ս. Պատարագին ներկա էր թեմի ողջ հոգևոր դասը:

Փետրվարի 18–ին, չորեքշաբթի.– Պահք:

Այսօր Հայաստանի Հանրապետությունում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան Գրիգոլ Բարամիձեն, ավարտելով իր դիվանագիտական առաքելությունը Հայաստանում, այցելեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ հրաժեշտ տալու Նորին Սրբությունը Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Պրն. Բարամիձեն շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետի կողմից ցուցաբերված հայրական այն ուշադրության համար, որ զգացել է Հայաստանում իր աշխատանքային տարիների ընթացքում:

Պրն. Բարամիձեն իր աշխատանքը կշարունակի հայաշատ Ջավախքում՝ իբրեւ նահանգապետ: «Դուք ոչ միայն պրն. Շեւարդնաձեի, այլ նաեւ մեր պատվիրակը

կդառնաք Ջավախքում»,– հաջողություններ մաղթելով նախկին դեսպանին նոր աշխատանքում ասաց Վեհափառ Հայրապետը:

Հանդիպման ընթացքում խոսվեց երկու երկրների եւ ժողովուրդների եղբայրության եւ համագործակցության զարգացման մասին:

Փետրվարի 19–ին, հինգշաբթի.– Սրբոց Վարդանանց զօրաւարացն մերոց՝ հազար երեսուն եւ վեց վկայից, որք կատարեցան ի մեծի պատերազմին:

Այսօր Մայր Տաճարի Ավագ Ս. Սեղանի վրա Ս. Պատարագ մատուցեց ՔԴՔԿ–ի վարիչ–տնօրեն Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը: Պատարագիչ Հայր սուրբը «Հայր մեր»–ից առաջ քարոզ խոսեց՝ «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն» (Եղիշե) բնաբանով:

Հընթացս Ս. Պատարագի կատարվեց Հոգեհանգստյան կարգ՝ վասն հանօրէն ննջեցելոց ազգիս Հայոց:

Ս. Պատարագից հետո, Իջման Ս. Սեղանի առջև կատարվեց Հայրապետական մաղթանք՝ Նորին Վեհափառություն Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի անվանակոչության տոնի առթիվ:

Ս. Պատարագից հետո, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Հանդիսությանց սրահում տեղի ունեցավ Վարդանանց հիշատակի ոգեկոչման ցերեկույթ (Տե՛ս էջ 230):

Նույն օրը, առավոտյան, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանի, Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանի, Ազգային բանակի հոգևոր խորհրդատու Տ. Վրթանես վրդ. Հովհաննիսյանի, Տ. Խորեն աբեղա Հովհաննիսյանի և Կրոնի գործերի պետական խորհրդի նախագահ պ. Լազար Սուջյանի, այցելեց Արցախ՝ Ստեփանակերտում մասնակցելու արցախահայության ազգային ազատագրական պայքարի 10–րդ տարեդարձին նվիրված հանդիսությանը (տե՛ս էջ 144):

Փետրվարի 21–ին, շաբաթ.– Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյն հարիւր յիսուն Հայրապետացն (381 թ.):

Այսօր Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում տեղի ունեցավ միջեկեղեցական ժողով՝ կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքության ներկայացուցիչ միտրոպոլիտ Դամասկինոսի և դավանակից Ղպտի Օրթոդոքս Եկեղեցու միտրոպոլիտ Բիշոյի մասնակցությամբ: Հյուրերը Վեհափառ Հայրապետին ներկայացրին Դամասկոսում փետրվարի 2–6–ը կայացած քաղկեդոնական և ոչ քաղկեդոնական Եկեղեցիների երկխոսության (Հալ Առաքելական Եկեղեցուց երկխոսությանը մասնակցում էր Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ արք. Գրիգորյանը) արդյունքները՝ աստվածաբանական և քրիստոսաբանական հարցերի շուրջ: Քննարկվեցին նաև Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների միջև փոխհարաբերությունների հետագա զարգացմանը վերաբերող խնդիրներ:

Ժողովին մասնակցում էին նաև Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արք. Պոզապալյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արք. Ներսիսյանը, Հարավային Ռուսաստանի թեմի առաջնորդ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը և Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը:

Վաղը, փետրվարի 22–ին, հյուրերը ներկա կլինեն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում արցախահայության ազգային–ազատագրական գարթոնքի 10–րդ տարեդարձին նվիրված գոհաբանական Սբ. Պատարագին:

Այսօր, երեկոյան ժամերգության ժամանակ, «Բանն որ ընդ Հօր» շարականի երգեցողության ընթացքում, Մայր Տաճարի խորանները ծածկվեցին վարագույրով:

Փետրվարի 22–ին, կիրակի.– Բուն Բարեկենդան:

Այսօր Մայր Տաճարի Ավագ Ս. Սեղանի վրա Ս. Պատարագ մատուցեց Հարավային Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը: «Հայր մեր»–ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը՝ «Եկեսցէ Արքայութիւն Քո» (Մատթ. Զ 10) բնաբանով (Տե՛ս էջ 159):

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ՝ արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների հոգիների խաղաղության համար:

Փետրվարի 25–ին, չորեքշաբթի.– Գ օր Մեծի Պահոց:

Այսօր Մայր Տաճարում, առավոտյան ժամերգությունից հետո, կատարվեց տարվա առաջին Արնագալի ժամերգությունը: Ժամերգության ավարտից հետո ներկաներին իր պատգամը փոխանցեց Վեհափառ Հայրապետը:

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ Միաբանական ժողով, որի ժամանակ Վեհափառ Հայրապետը միաբանների ուշադրությունը հրավիրեց Եկեղեցի–ժողովուրդ կապի է՛լ ավելի սերտացման խնդրի վրա:

Փետրվարի 27–ին, ուրբաթ.– Ե օր Մեծի Պահոց:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Նորին Սուրբ Օծությունն Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ Հայաստանի եւ Արցախի թեմական առաջնորդների մեկօրյա խորհրդակցական հավաք:

Ժողովի ընթացքում քննարկվեցին թեմերի գործունեությանը, բնակչության շրջանում հոգեւոր քարոզչության զորացմանը վերաբերող հարցեր: Մասնավորապես շեշտվեց թեմական ավանդական կառույցների՝ թեմական խորհուրդների եւ ծխական համալիքների վերակազմավորման անհրաժեշտությունը Հայաստանում, վերջինիս հետ կապված դժվարությունները: Նշվեց թեմերում հոգեւոր հովիվների պակասը, ինչը կարող է լրացվել հատուկ քահանայից երկամյա դասընթացների կազմակերպմամբ:

Հաջորդ նմանատիպ հավաքը տեղի կունենա մարտի վերջերին, որի ընթացքում թեմական առաջնորդները Վեհափառ Հայրապետին կներկայացնեն վերջին մեկ տարվա ընթացքում թեմերում կատարված աշխատանքների հաշվետվությունը, ինչպես նաեւ առաջիկա գործունեության ծրագրերը:

Թեմականների ժողովին, մասնակցում էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանը, Արմավիրի թեմի առաջնորդ Ասողիկ եպս. Արիստակեսյանը, Գեղարքունյաց թեմի առաջնորդ Անանիա եպս. Արաբաջյանը, Սյունյաց թեմի առաջնորդ Աբրահամ եպս. Մկրտչյանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Նավասարդ եպս. Կճոյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպս. Չուլջյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ եպս. Մարտիրոսյանը: Հավաքին ներկա էին նաեւ Մայր Տաճարի

յուսարարապետ Տ. Հուսիկ արք. Սանթուրյանը, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի դիվանապետ Տ. Ներսես արք. Պոզապալյանը, Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը, Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոնի վարիչ–տնօրեն Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը:

Նույն օրը, երեկոյան, Մայր Տաճարում տեղի ունեցավ Հանգստյան ժամերգություն:

Մարտի 1–ին, կիրակի.– Բ կիրակի Քառասնորդական Պահոց (Արտաքստան):

Այսօր Մայր Տաճարի Ավագ Ս. Սեղանի վրա Ս. Պատարագ մատուցեց Մայր Տաճարի փոխյուսարար Տ. Անուշավան արեղա Ծամկոչյանը: «Հայր մեր»–ից առաջ քարոզ խոսեց Գեր. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը՝ «Որ զօրէնս սրբութեամբ պահոց...» (Շարականն) բնաբանով:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

Մարտի 3–ին, երեքշաբթի.– Թ օր Մեծի Պահոց:

Այսօր Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում սկսվեց Հայ Առաքելական Եկեղեցու կանոնադրության մշակման հանձնախմբի ներքոհան ժողովը՝ հանձնախմբի նախագահ, Ամերիկայի Արևմտյան թեմի առաջնորդ Վայէ արք. Հովսեփյանի նախագահությամբ: Ժողովն ամբողջությամբ վերանայեց կանոնադրության նախագիծը՝ եղած առաջարկությունների հիման վրա կատարելով համապատասխան փոփոխություններ:

Առաջարկությունները վերախմբագրելուց հետո, մշակված նախագիծը կներկայացվի Նորին Սուրբ Օծությունն Տ.Տ Գարեգին Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ապա կքննարկվի Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողովում, որից հետո այն կներկայացվի Հայաստանյայց Եկեղեցու Ընդհանրական և թեմական եպիսկոպոսներին:

Ակնկալվում է, որ մինչև այս տարվա ավարտը, ստացված գրավոր առաջարկություններից հետո, կանոնադրության նախագիծը կամբողջացվի և 1999 թվականին կներկայացվի Ազգային–եկեղեցական ժողովի դատին:

Եոօրյա ժողովին մասնակցում էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանը, Գրիգորիս արք. Բունիաթյանը, Կ. Պոլսի Հայոց Պատրիարքի լիազոր ընդհանուր փոխանորդ Մեսրոպ արք. Մութաֆյանը, Արմավիրի թեմի առաջնորդ Աստղիկ եպս. Արիստակեսյանը, Սյունյաց թեմի առաջնորդ Աբրահամ եպս. Մկրտչյանը, հանձնախմբի աշխարհական անդամներ, Հայաստանի գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանը, իրավաբաններ Գառնիկ Սաֆարյանը և Հայկ Խաչատրյանը:

Մարտի 6–ին, ուրբաթ.– Ժ–Ի օր Մեծի Պահոց:

Այսօր Վեհափառ Հայրապետը այցելեց Արագածոտնի թեմ: Ապարան քաղաքի Ս. Խաչ եկեղեցում Վեհափառ Հայրապետը մասնակցեց Խաղաղական ժամերգությանը, որի ավարտից հետո իր պատգամը ուղղեց ներկաներին:

Մարտի 8–ին, կիրակի.– Գ կիրակի Քառասնորդական Պահոց:

Այսօր Վեհափառ Հայրապետը այցելեց Գեղարքունյաց թեմ՝ Գավառ: Թեմի

առաջնորդանիստ Ս. Աստվածածին եկեղեցում կատարվեց Խաղաղական ժամերգություն՝ Վեհափառ Հայրապետի մասնակցությամբ: Ժամերգությունից հետո Վեհափառ Հայրապետը պատգամ հղեց ներկաներին:

Նույն օրը Մայր տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Գևորգյան Ճեմարանի փոխտեսուչ Տ. Բարկեն արեղա Սալբիյանը: «Հայր մեր»–ից առաջ քարոզ խոսեց Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը՝ «Եղբայր քո այս մեռեալ էր՝ եւ եկեաց, կորուսեալ՝ եւ գտաւ» (Ղուկ. ԺԵ 32) բնաբանով:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

Մարտի 10–ին, երեքշաբթի.– ԺԶ օր Մեծի Պահոց:

Այսօր, լույս առավոտյան, վախճանվեց Կ. Պոլսի Հայոց երանաշնորհ Պատրիարք Գեր. Տ. Գարեգին արքեպս. Գազանճյանը:

Մարտի 13–ին, ուրբաթ.– ԺԹ օր Մեծի Պահոց:

Այսօր Վեհափառ Հայրապետը այցելեց Կոտայքի թեմ: Թեմի առաջնորդանիստ Ս. Աստվածածին եկեղեցում կատարվեց Խաղաղական ժամերգություն՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ: Ժամերգությունից հետո Վեհափառ Հայրապետը պատգամ հղեց ներկաներին:

Մարտի 15–ին, կիրակի.– Դ կիրակի Քառասնորդական Պահոց (Տնտեսին):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Աշոտ արեղա Մնացականյանը: «Հայր մեր»–ից առաջ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը՝ «Տուր զհամար տնտեսութեան քո» (Ղուկ ԺԶ 2) բնաբանով:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ (տե՛ս էջ 171):

Մարտի 18–ին, չորեքշաբթի.– ԻԴ օր Մեծի Պահոց:

Այսօր Վեհափառ Հայրապետը այցելեց Արարատյան Հայրապետական թեմ: Թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում կատարվեց Խաղաղական ժամերգություն՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ: Ժամերգությունից հետո Վեհափառ Հայրապետը պատգամ հղեց ներկաներին:

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ Միաբանական ժողով: Ժողովի ընթացքում Վեհափառ Հայրապետը միաբաններին ներկայացրեց Մեծ Պահքի ընթացքում թեմեր կատարած այցելությունների տպավորությունները:

Մարտի 20–ին, ուրբաթ.– ԻԶ օր Մեծի Պահոց:

Այսօր Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում, Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի ունեցավ քահանայից տարեկան ժողովը: Հայաստանի և Արցախի թեմերի շուրջ 120 հոգևորականների մասնակցությամբ հերթական այս հավաքը նպատակ ուներ ճշտելու քահանայի առաքելությունն ու կոչումը Հայաստանում: Իսկ ինչպես բացման խոսքում նշեց Մայր Աթոռի դիվանապետ Ներսես արք. Պոզապալյանը՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի կամարների ներքո քահանայության ուխտը վերստին ամրապնդելու:

Վեհափառ Հայրապետը նշեց, որ հոգևորականների առաջին հրամայականն այսօր թեմական կառույցների՝ թեմական խորհուրդների և ծխական համայնքների վերակազմավորման ուղղությամբ գործունեության ծավալումն է, որպեսզի ժողովուրդն իրեն կարողանա զգալ Եկեղեցու անդամ:

Մտքերի փոխանակության ընթացքում ժողովականներն իրենց մտորումներն արտահայտեցին այս խնդրի շուրջ, մատնանշելով բոլոր դժվարությունները՝ թե՛ նյութական և թե՛ հոգևոր: Նշվեց հոգևորականների, ինչպես նաև համայնքային կյանքի ձևավորման համար անհրաժեշտ կենտրոնների պակասի խնդիրը Հայաստանում: Խոսվեց նաև քահանայից դասում տեղ գտած թերացումների մասին:

Հոգևորականի իդեալական պատկերի հայեցին Հայց. Առաքելական Եկեղեցում Ջեռնադրության Մաշտոցն է, որին անդրադարձավ Միքայել ծ. վարդապետ Աջապահյանը՝ «Քահանայության ըմբռնումը Հայաստանում» թեմայով դասախոսությամբ:

Նորին Սրբությունը, ուշադիր լսելով բոլոր առաջարկությունները և դիտողությունները, դրանց վերաբերյալ արեց համապատասխան նշումներ և հավաստիացրեց, որ արված դիտողությունները հաշվի կառնվեն Մայր Աթոռի հետագա գործունեության ընթացքում:

«Վստահությունը պետք է շահել ժողովրդի, և դրա միակ ճանապարհը գործն է», -եզրափակեց Վեհափառ Հայրապետը, վերհիշելով Եղիշեի խոսքերը. «Զայլսն բարձրացուցանել և զինքեանս խոնհարհեցուցանել»:

Ժողովն ավարտվեց միասնական ժամերգությամբ Սբ. Էջմիածնի Մայր Տաճարում:

Ժողովին ներկա էին թեմակալ առաջնորդներ՝ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանը, Հունաստանի թեմի հայրապետական պատվիրակ և առաջնորդ Ոսկան արք. Գալփաքյանը, Արմավիրի թեմի առաջնորդ Աստղիկ եպս. Արիստակեսյանը, Գեղարքունիքի թեմի առաջնորդ Անանիա եպս. Արաբաջյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգև եպս. Մարտիրոսյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպս. Չուլջյանը, Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել եպս. Քարամյանը, Սյունիքի թեմի առաջնորդ Աբրահամ եպս. Մկրտչյանը, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի լուսարարապետ Հուսիկ արք. Սանթուրյանը, ինչպես նաև Մայր Աթոռի միաբանության անդամներ Արսեն արք. Բերբերյանը, Գրիգորիս արք. Բունիաթյանը, վարդապետներ, արեղաներ, սարկավագներ, ծխատեր քահանաներ:

Երեկոյան Վեհափառ Հայրապետը այցելեց Արագածոտնի թեմ՝ Բամբակաշատ: Թեմի առաջնորդանիստ Ս. Աստվածածին եկեղեցում կատարվեց խաղաղական ժամերգություն՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ: Ժամերգությունից հետո Վեհափառ Հայրապետը պատգամ հղեց ներկաներին:

Մարտի 22-ին, կիրակի.- Ե կիրակի Քառասնորդական Պահոց (Դատաւորին):

Այսօր Մայր Տաճարի Ավագ Ս. Սեղանի վրա Ս. Պատարագ մատուցեց ՔԴՔԿ-ի փոխվարիչ-տնօրեն Տ. Զարեհ աբեղա Կաբաղյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց ՔԴՔԿ-ի վարիչ-տնօրեն Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը՝ «Իսկ Որդի մարդոյ եկեալ՝ գտանիցէ՞ արդեօք հաւատս յերկրի» (Ղուկ. ԺԸ 8) բնաբանով:

Փետրվարի 26-ին, հինգշաբթի.- ԼԲ օր Մեծի Պահոց:

Այսօր, ավարտելով իր առաքելությունը Հայաստանում, Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի Հայաստանի պատվիրակության ղեկավար Ջորան

Ծովանովիչը պատվիրակության նոր ղեկավար Էլիզաբեթ Թվինչի հետ այցելեց Մայր Աթոռ Սբ. Էջմիածին՝ հրաժեշտ տալու Նորին Սրբությունը Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին և Վեհափառ Հայրապետին ներկայացնելու նոր ղեկավարին:

Վեհափառ Հայրապետը հաջողություն մաղթեց պրն. Ծովանովիչին հետագա գործունեության ընթացքում: Հաջողություն մաղթելով նաեւ տիկ. Թվինչին՝ նոր ստանձնած պաշտոնում, Վեհափառ Հայրապետը նոր ղեկավարին ներկայացրեց Մայր Աթոռի գործունեության հիմնական ուղղությունները, մասնավորապես եկեղեցու կողմից իրականացվող զարգացման ծրագրերը:

Մարտի 27-ին, ուրբաթ.– ԼԳ օր Մեծի Պահոց:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսն ընդունեց ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի պատվիրակությանը՝ գրասենյակի տնօրեն, դեսպան Ջերարդ Ստուդմանի գլխավորությամբ:

Վեհափառ Հայրապետը նշեց, որ անհրաժեշտ է լավ հասկանալ մարդու իրավունքների ճանաչման և գործադրման մարզում այն հնչակալական առաջընթացը, որ գոյություն ունի Հայաստանում:

«Չպետք է մոռանալ, որ Հայաստանը դուրս է եկել այնպիսի համակարգից, որտեղ մարդու իրավունքները երբեք չեն ունեցել իրենց արժանի տեղն ու արժեքը: Սակայն նկատում եմ, որ խոշոր առաջադիմություն է արձանագրվել այս մարզում», –ասաց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը կոչ արեց միջազգային դիտորդներին ցուցաբերել համակողմանի մոտեցում և տեսնել թերացումներն ու առաջընթացը միասնաբար:

Մարտի 28-ին, շաբաթ.– Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն եւ մտին ի Վիրապն:

Այսօր Մայր Տաճարի Ավագ Ս. Սեղանի վրա Ս. Պատարագ մատուցեց «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր Տ. Բագրատ արեղա Գալստյանը: «Հայր մեր»–ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր սուրբը՝ «Ջի արդարութիւն՝ անմահ է» (Իմաստ. Ա 15) բնաբանով:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

Այսօր, առավոտյան, Նորին Սուրբ Օծություն Գարեգին Ա Կաթողիկոսն ուխտի մեկնեց Խոր Վիրապ: Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին Հովհաննես–Պողոս Բ Պապի ներկայացուցիչները՝ կլաուդիո Կուչերոտին և Միշել Վան Պարիսը:

Խոր Վիրապ ուխտի էին եկել նաև բազմաթիվ հավատացյալներ, Հոգևոր Ճեմարանի ուսանողներ:

Խոր Վիրապի Սբ. Աստվածածնի եկեղեցում մատուցվեց Ս. Պատարագ, ընթացքն որի քարոզեց Վեհափառ Հայրապետը:

«Տասներեք տարի ապրելով Խոր Վիրապի բանտում, երկրային լույսից զրկված Սբ. Գրիգոր Լուսավորիչն իր հոգում պահեց աստվածային լույսը և այն տարածեց մեր ժողովրդի կյանքում: Եվ այսօր հայությունը հպարտանում է, որ 1700 տարի առաջ առաջինն է պետականորեն ճանաչել քրիստոնեությունը», –ասաց Վեհափառ Հայրապետը: Սակայն, ինչպես նշեց Նորին Սրբությունը, այս

իրողությունը չպետք է մնա հայ ժողովրդի կյանքում իբրև պատմության գեղեցիկ էջ: Անհրաժեշտ է կենդանացնել քրիստոնեական հավատքից քխող բուն արժեքը, որ ավանդել է Հայ Առաքելական Եկեղեցին:

«Քրիստոսի եկեղեցին մեզ կենդանի պահող այն ուժն է, որից եթե կտրվենք, մեր աղբյուրից կցամաքենք»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Հավարտ Պատարագի, իբրև օրվա հիշատակ, ուխտավորներին բաժանվեց Վեհափառ Հայրապետի նվերը՝ Սբ. Գրիգոր Լուսավորչին նվիրված 4-րդ դարի հոյլն մեկնիչ Հովհաննէ Ոսկեբերանի «Ներբող Սուրբ Գրիգոր Լուսավորչին» գրքույկը:

Սբ. Պատարագից հետո Վեհափառ Հայրապետը շրջեց Խոր Վիրապի վանքի տարածքում, մանրամասն ծանոթացավ շրջակայքի բարեկարգման ու վերանորոգման ծրագրերին:

Մարտի 29-ին, կիրակի.- Զ կիրակի Զատասնորդական Պահոց (Գալստեան):

Այսօր Մայր Տաճարի Ավագ Ս. Սեղանի վրա Ս. Պատարագ մատուցեց Մայր Տաճարի փոխոլուսարար Տ. Անուշավան արեղա Ժամկոչյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Մակար արեղա Հովհաննիսյանը՝ «Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, եւ յամենայն անձնէ քումմէ, եւ յամենայն զօրութենէ քումմէ, եւ յամենայն մտաց քոց. եւ զընկեր քո իբրեւ զանձն քո» (Ղուկ. ժ 27) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

Մարտի 31-ին, երեքշաբթի.- ԼԸ օր Մեծի Պահոց:

Այսօր Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Նորին Սուրբ Օծությունն Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսն ընդունեց Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի պատվիրակությանը՝ լորդ Ռասել Ջոնսթոնի ղեկավարությամբ:

Շուրջ մեկժամյա հանդիպման ընթացքում խոսվեց Եկեղեցու եւ պետության փոխհարաբերությունների մասին:

Վեհափառ Հայրապետը նշեց, որ Հայ Առաքելական Եկեղեցին, լինելով ոչ պետական Եկեղեցի, պետության եւ ժողովրդի կողմից ընդունվում է որպես ազգային Եկեղեցի:

«Հայ Եկեղեցին հայության անբաժան մասն է եւ տիրական տեղ ունի ժողովրդի պատմության եւ այսօրվա կյանքում», - ասաց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը նշեց, որ Հայ Եկեղեցու ներկայիս դերը հիմնականում հայ ժողովրդի քրիստոնեական հոգեւոր եւ բարոյական դաստիարակությունն է եւ սատարումը պետության ամրացմանը:

Խոսվեց նաեւ եվրոպական ազգերի եւ մշակույթների հետ հայկական կապերի, ինչպես նաեւ աղանդների տարածմանը վերաբերող խնդիրների մասին: